ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

15 ՄԱՅԻՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՉԿԱՅԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին Լադիկ Ղազարյանը, Սամսոն Հովհաննիսյանը և Արտաշես Դրմեյանը:

Համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանը առաջարկեց սկսել ավագանու նիստը, քանի որ քվորումը ապահովված է:

Սակայն մինչ նիստի սկսվելը, համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Մարտիկ Մաթոսյանը հարց բարձրացրեց համայնքի բնակիչներից մեկին (Համլետ Հարությունյան) 2022 թվականի դեկտեմբեր ամսին աճուրդով օտարված հողատարածքի (արոտի) սեփականության իրավունքի գրանցումը կադաստրի կոմիտեի կողմից մերժելու արդյունքում, քաղաքացու հարցի վերջնական լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ:

Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ղուկաս Մուրազյանը պատասխանեց բարձրացված հարցին, որը, սակայն, չբավարարեց ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներին:

Այնուհետև «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Ալբերտ Այվազյանը հարց առաջադրեց համայնքի ղեկավարին, թե ի՞նչ ընթացքի մեջ է համայնքային ենթակայության «Ախուրյանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» և «Մարշաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» համայնքայի ոչ առևտրային կազմակերպությունների միավորման գործընթացը: Համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանը ներկայացրեց այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքը:

Սակայն այդ պատասխանը ևս չգոհացրեց «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամներին:

Այնուհետև «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Ալբերտ Ալվազյանը նշեց , որ մինչև այժմ իրենց կողմից բարձրացված ոչ մի հարցի լուծում չի տրվել և նման պայմաններում անիմաստ են համարում ավագանու նիստին՝ իրենց խմբակցության մասնակցությունը՝ մինչև խմբակցության անդամների կողմից բարձրացված բոլոր հարցերին լուծում տալը, որից հետո խմբակցության բոլոր անդամները լքեցին նիստերի դահլիճը:

Ավելի ուշ նիստին ներկայացավ ավագանու անդամ Արտաշես Դրմեյանը:

Քվորում չապահովվելու պատճառով նիստը չկայացավ:

Ավագանու անդամներ

ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿԻ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍԻԼՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԴՐՄԵՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝
աշխատակազմի քարտուղար՝

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ _____